https://doi.org/10.53587/25792865-2025.13-129

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Բադեյան Ա. Վ., Վարդանյան Լ. Ա.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնների խախտման պատճառների և հետևանքների պարզումը ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաղկացուցիչ մասն է կազմում: Դրանց վերլուծությունը և համապատասխան հետևությունները կարող են խթան հանդիսանալ հետագայում տվյալ ոլորտում առաջացող խնդիրներից խուսափելու կամ առնվազն մշտապես կրկնվող նույնատիպ դեպքերի թիվը պակասեցնելու համար:

Հոդվածում ներկայացվել են աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների խախտումների հիմնական պատճառներն ու դրանց հետևանքները: Անդրադարձ է կատարվել այդ խախտումների հետևանքով տեղի ունեցած դեպքերի Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան վիճակագրությանը: Առաջարկվել է իրականացնել մի շարք արդյունավետ միջոցառումներ, որոնք միտված են լինելու աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների հետևանքով տեղի ունեցող դեպքերի քանակի կրճատմանն ու հասցվող վնասի նվազմանը:

Բանալի բառեր. *աշխատանքի պաշտպանություն, անվտանգության կանոններ, աշխատանքային պայմաններ, աշխատանքի անվտանգություն, դժբախտ դեպքեր, կանխարգելում:*

Աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովումը կարևորագույն գործոն է յուրաքանչյուր աշխատանքային գործընթացում, որն ուղղված է աշխատողների առողջությունը և կյանքը պաշտպանելու միջոցառումների իրականացմանը: Տարիների ընթացքում աշխատանքի անվտանգության ոլորտում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, սակայն դեռևս կան իրավիճակներ, երբ անվտանգության կանոնների խախտումները դժբախտ պատահարների պատճառ են դառնում: Այդ իսկ պատճառով նշված խնդրի հետազոտությունը կարևոր է ոչ միայն աշխատողների, այլ նաև գործատուների ու պետության համար՝ կանխելու ծայրահեղ այն իրավիճակները, որոնք հանգեցնում են մինչև իսկ մահացու դեպքերի:

Թղթակցական հասցեն՝ Բադեյան Աշոտ Վարդգեսի, ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, email: ashot.badeyan55@gmail.com

Աշխատանքի անվտանգության ապահովումը համակարգ է, որը միտված է աշխատանքային գործընթացում աշխատողի անվտանգության ապահովմանը, իր իսկ պաշտպանվածությունը բարձրացնելու համար նախատեսված գործողությունների իրականացմանն ու աշխատանքային պայմանների բարելավմանը: Դա ներառում է բոլոր այն կանոնների, չափանիշների ու մեթոդների կիրառումը, որոնք նվազեցնում են առողջությանը կամ կյանքի համար վտանգ ներկայացնող գործոնները:

Աշխատանքի անվտանգության հիմնական խնդիրներն են.

- Աշխատողի և նրա շրջապատի պաշտպանության ապահովումը,
- Աշխատանքային միջավայրի անբարենպաստ ազդեցության նվազեցումը,
- Աշխատողի առողջության պահպանման և ֆիզիկական ու հոգեբանական վիճակի բարելավման միջոցառումների իրականացումը:

Ներկայումս շատ երկրներ ընդունել են այն միջազգային ստանդարտները, որոնք պարտադրում են, որ յուրաքանչյուր կազմակերպություն հետևի աշխատանքի անվտանգության կանոններին, ունենան համապատասխան սարքավորումներ և աշխատակիցների համար կազմակերպվեն վերապատրաստումներ:

Աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների խախտումները կարող են տեղի ունենալ մի շարք պատճառներով: Դրանց հիմնական խմբերն են.

1. **Անտեղյակություն և անփորձություն**. նոր աշխատողները կամ դրանց հետ զուգահեռ գործող մասնագետները կարող են չիմանալ կամ չհասկանալ անվտանգության կանոնների կարևորությունը: Դա հաճախ տեղի է ունենում, երբ անվտանգության կանոնները չնչին ուշադրություն են ստանում կամ չեն հրահանգավորում ժամանակին:
2. **Թերացումներ աշխատավայրում**. շատ դեպքերում անվտանգության կանոնների խախտման պատճառ կարող են լինել աշխատանքային պայմանները: Սխալ կազմակերպված և վտանգավոր աշխատանքային միջավայրը կամ վնասակար նյութերի օգտագործումը կարող են ստեղծել վտանգներ:
3. **Հաղորդակցության բացակայություն**. աշխատողների և ղեկավարների միջև անբավարար հաղորդակցությունը նույնպես կարող է հանգեցնել անվտանգության կանոնների չկատարմանը: Երբ հստակ չեն ներկայացվում անվտանգության քայլերը կամ կանոնները, աշխատողը կարող է չկատարել դրանք:
4. **Եկամտի խնայողություն**. կազմակերպությունները կարող են որոշել, որ անվտանգության միջոցների ներդրումը կամ անվտանգության համակարգերի թարմացումը ֆինանսապես անհիմն է: Արդյունքում՝ աշխատողները մնում են անպաշտպան, երբ աշխատանքային պայմանները չեն համապատասխանում անվտանգության նորմերին:

Աշխատանքի անվտանգության կանոնների խախտումները բնականաբար ունեն սուր հետևանքներ, որոնք կարող են վնասել թե՛ աշխատողների առողջությունը, թե՛ կազմակերպության գործունեությունը: Ամենատարածված աշխատանքային դեպքերն են.

- **Վնասվածքներ**. վնասվածքները կարող են լինել տարբեր տեսակի՝ բեկորներ, այրվածքներ, կտրվածքներ, ոսկորների կոտրվածքներ, ուժեղ սթրեսներ: Դրանք սովորաբար տեղի են ունենում, երբ աշխատանքային տարածքում չեն պահպանվում անվտանգության նորմերը:

- **Աշխատավայրում մահվան ելքով դեպքեր**. մահվան ելքով դեպքերն առավել հաճախ կարող են տեղի ունենալ բարձր վտանգայնության աշխատանքներում, օրինակ՝ շինարարության ոլորտում, քիմիական գործարաններում, էներգետիկ բնագավառում: Մահվան ելքով պատահարները տեղի են ունեցել, երբ աշխատանքային տարածքում վտանգավոր սարքավորումներ օգտագործվել են առանց համապատասխան նախազգուշացման կամ անվտանգության սարքերի, ինչպես նաև նման ելքերը շատ են շինարարությունում՝ բարձրության վրա կատարվող աշխատանքների ժամանակ:

Ըստ ՄԱԿ-ի միջազգային աշխատողների կազմակերպության՝ «ILO» (International Labour Organization)-ի վերջին գնահատականների, որոնք վերաբերում են 2019թ.-ին, ամբողջ աշխարհում ավելի քան 395 միլիոն աշխատող ստացել են ոչ մահացու աշխատանքային վնասվածքներ, իսկ մոտ 2.93 միլիոն աշխատող մահացել են աշխատանքային գործոնների հետևանքով: Վերջինս նշանակում է, որ 2000 թվականին կատարված հետազոտությունների համեմատ գրանցվել է ավելի քան 12 % աճ: Աշխատանքային մահվան դեպքերի համախառն թվի էական աճը պայմանավորված է մի քանի գործոններով, որոնք կարող են կապված լինել ինչպես աշխատանքային դեպքերի նկատմամբ բացահայտումների թվի աճի, այնպես էլ սոցիալ-դեմոգրաֆիկ փոփոխությունների հետ: Օրինակ, գլոբալ աշխատանքային ուժը 2000 և 2019 թվականների միջև աճել է 26 %-ով՝ 2.75 միլիարդից հասնելով 3.46 միլիարդի: Կողմնակի գործիքները ևս էականորեն բարելավվել են վերջին երկու տասնամյակներում, ինչը նպաստել է դեպքերի հայտնաբերման թվի աճին [1]:

Հայաստանի Հանրապետությունում շինարարական ոլորտը նույնպես առանձնանում է բարձր ռիսկայնությամբ: Ըստ վերջին տարիների վիճակագրության արձանագրվել են տարբեր մահացու դեպքեր՝ կապված ինչպես բարձրության վրա կատարվող աշխատանքների հետ, այնպես էլ մեքենա-մեխանիզմների վթարների հետ: Սակայն Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրությունն ավելի հաճախ ընդգրկում է միայն առավել ընդգրկուն աղետներ և մահացու դեպքերի մեծ մասն առայժմ մնում է հաշվի չառնված:

Համեմատաբար փոքր երկրներում պատահարների նվազումը կարող է հատկապես կախված լինել տեղական շինարարության ոլորտի վերահսկողությունից:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների վիճակագրության համաձայն՝ 2023թ.-ի ընթացքում նշանակված թվով 137, իսկ 2024թ.-ի ընթացքում նշանակված՝ թվով 210 փորձաքննություններից մոտավորապես 20%-ը եղել են մահվան ելքով: Վերոնշյալից առանձնացվել են շուրջ 80 դեպքերով Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառում տեղի ունեցած դժբախտ դեպքերի կայացմանը նպաստող խախտումների պատճառների պարզման նպատակով նշանակված փորձաքննություններ: Նշված փորձաքննությունները վերլուծության են ենթարկվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 26 օգոստոսի 2022թ. թիվ 21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» շինարարական նորմերով և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի 2016 թվականի նոյեմբերի 08-ի N 71-Լ հրամանով հաստատված՝ ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ: Աշխատանքի անվտանգության ուսուցում: Ընդհանուր

դրույթներ» միջպետական ստանդարտով սահմանված պահանջներով: Այդ նպատակով վեր են հանվել դեպքերի պատճառները և նպաստող գործոնները, որոնց հիման վրա կատարվել են դրանց կանխարգելման ուղիների մշակման աշխատանքներ, ինչը թույլ է տվել մշակել համապատասխան առաջարկություններ, որոնք ներկայացվել են շուրջ 25 շինարարական կազմակերպություններին, որոնցից են, մասնավորապես՝ «Հասլ Բիլդ» ՍՊ, «Պրոմ Գրուպ» ՍՊ, «Էդուարդ-շին» ՍՊ, «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊ, «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊ, «Տուն Շին» ՍՊ ընկերությունները և այլ իրավաբանական անձանց՝ կիրառելու համար մի շարք արդյունավետ միջոցառումներ, որոնք կարող են նվազեցնել աշխատանքի անվտանգության կանոնների խախտման ռիսկերը:

Դժբախտ դեպքերի կայացման պատճառների կատարված վերլուծությունների արդյունքները նաև ցույց են տվել, որ այդ դեպքերի ընդհանուր քանակի մոտավորապես 150-ի մեջ մարդկային գործոնի ազդեցությամբ թույլ տրված սխալներն առավել մեծ դեր են խաղում, որը կազմում է դեպքերի մոտավորապես 70 %-ը:

Աշխատանքի անվտանգությանը պետք է ցուցաբերել պրոֆեսիոնալ մոտեցում, ինչը հնարավորություն կտա խուսափել աշխատանքի ընթացքում վնասվածքներից և խախտումներից: Մեր կողմից կատարված վերլուծությունների արդյունքները հանգեցնում են մի շարք արդյունավետ միջոցառումների կատարման անհրաժեշտությանը, որոնք կարող են նվազեցնել անվտանգության կանոնների խախտման վտանգը.

1. **Հարկադիր վերապատրաստումներ և դասընթացներ**.

Աշխատողներին պետք է տրամադրվեն համապատասխան ուսուցողական ծրագրեր, որոնք բացատրում են աշխատանքի անվտանգության սկզբունքները: Սա կբարձրացնի աշխատողների գիտակցությունը և կօգնի խուսափել վտանգներից՝ համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» նորմատիվ ակտի 4-րդ՝ «Անվտանգության տեխնիկայի ընդհանուր պահանջներ» գլխի 50-րդ կետի պահանջի՝ «Կազմակերպության ղեկավարությունը պարտավոր է ժամանակին ապահովել աշխատանքի անվտանգ մեթոդների և հմտությունների ուսուցում (սույն նորմերի գլուխ 8-ում), անվտանգության տեխնիկայի գծով հրահանգավորման անցկացում և գիտելիքների ստուգում»՝ հաշվի առնելով աշխատանքնային պարտականությունները և կատարվող աշխատանքների բնույթը: Անվտանգության տեխնիկայի հարցերով ուսուցման և գիտելիքների ստուգման կարգը սահմանվում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի 2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 71-Լ հրամանով հաստատված ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցում. Ընդհանուր դրույթներ (ԳՕՍՏ 12.0.004-90-ի փոխարեն)» միջպետական ստանդարտի պահանջներով [2]:

Ըստ նշված նորմատիվ ակտի 8-րդ՝ «Աշխատանքի անվտանգության տեխնիկայի գծով ուսուցման կազմակերպումը շինարարությունում» գլխի 781-րդ կետի պահանջի՝ «Ներածական հրահանգավորումն իրականացվում է բոլոր աշխատողների համար, ինչպես նաև կազմակերպությունում աշխատելու գործուղվածների և (կամ) ուսումնական, արտադրական պրակտիկա անցնողների ու այցելուների համար»: Ներածական հրահանգավորումն իրականացվում է աշխատանքի անվտանգության տեխնիկայի (կամ ռիսկերի կառավարման)

մասնագետի կամ այլ մասնագետի կողմից, ով լիազորված է կազմակերպության տնօրենի կողմից հատուկ հրամանով: Աշխատանքի անվտանգության տեխնիկայի վերաբերյալ ներածական հրահանգավորումն իրականացվում է համաձայն ծրագրի, որը մշակվել է ըստ կազմակերպության արտադրական գործունեության առանձնահատկությունների (ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցում. Ընդհանուր դրույթներ» հավելված Բ, ծրագիր Բ.1, որի արդյունքները գրառվում են Ա. հավելվածի Ա.4 ձևի մատյանում) [2]: Համաձայն նշված նորմատիվ ակտի 782-րդ և 783-րդ կետերի պահանջի՝ աշխատակիցը ներածական հրահանգավորումից հետո աշխատատեղում, մինչև ինքնուրույն աշխատանք կատարելը տվյալ ստորաբաժանման ղեկավարի կամ աշխատանքի անմիջական ղեկավարի (արտադրողի, վարպետ, վարիչ, ուսուցիչ և այլն) կողմից, ով սահմանված կարգով անցել է աշխատանքի անվտանգության տեխնիկայի ուսուցում և գիտելիքների ստուգում, անցնում է աշխատանքի պաշտպանության վերաբերյալ առաջնային հրահանգավորում աշխատատեղում և որից հետո միայն ստանում ինքնուրույն աշխատանք կատարելու համար թույլտվություն [2]:

Աշխատանքի անվտանգության տեխնիկայի վերաբերյալ առաջնային հրահանգավորումն իրականացվում է ըստ պատասխանատուի կողմից սահմանված կարգով մշակված և հաստատված ծրագրի՝ համաձայն աշխատանքային կարգի, օրենսդրության և այլ կարգավորող իրավական ակտերի պահանջների (ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ: Աշխատանքի անվտանգության ուսուցում: Ընդհանուր դրույթներ» հավելված Բ, ծրագիր Բ.2, որի արդյունքները գրառվում են ստանդարտի Ա հավելվածի Ա.5 ձևի մատյանում):

Կազմակերպության աշխատակիցների հրահանգավորումների մատյանում պետք է կատարվի համապատասխան գրառումներ՝ հրահանգավորողի և հրահանգավորվողի վավերացմամբ [3]:

Համաձայն վերը նշված նորմատիվ ակտի 786-րդ և 787-րդ կետերի պահանջների՝ «Աշխատավայրում կրկնվող հրահանգավորումը պարբերաբար իրականացվում է բոլոր անձանց հետ՝ պաշտոնի նկարագրով սահմանված ժամկետներում: Կրկնվող հրահանգավորումն աշխատավայրում իրականացվում է ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները համախմբելու նպատակով» [2]:

ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ: Աշխատանքի անվտանգության ուսուցում: Ընդհանուր դրույթներ» ստանդարտի 8.8 կետի համաձայն կրկնվող հրահանգավորումը պետք է անցկացվի ոչ ուշ, քան յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ [3]:

Դասընթացների ընթացքում աշխատողների զգոնության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը նույնպես դրական ազդեցություն կարող է թողնել: Աշխատողներին պետք է ներկայացվեն իրենց պարտականությունները, որպեսզի վերջիններս հստակ գիտակցեն իրենց պատասխանատվության կարևորությունը:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի. «Աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ... պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները ....»[4]:

2. Անվտանգության միջոցներ.

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 217-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջի. «Գործատուն պարտավոր է ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ», իսկ համաձայն 243-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի. «Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: Հաշվի առնելով աշխատողների համար արտադրության վտանգավորության աստիճանը՝ գործատուն կազմակերպությունում ներգրավում է աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման որակավորված ծառայություն կամ այդ գործառույթն իրականացնում է անձամբ» [4]:

Վերոնշյալի շրջանակներում գործատուի կողմից մշտապես անհրաժեշտ է, որպեսզի տեղադրվեն և արդիականացվեն ըստ աշխատանքի բնույթի օգտագործվող անվտանգության սարքերը: Համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» նորմատիվ ակտի 4-րդ՝ «Անվտանգության տեխնիկայի ընդհանուր պահանջներ»-ը գլխի 69-րդ կետի՝ «Ղեկավարները, աշխատողները, մասնագետները և ծառայողները պետք է գործատուի միջոցների հաշվին ապահովված լինեն արտահագուստով, անհատական և կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցներով՝ համաձայն ԱՊՄ-ների տրամադրման կարգի»: Սրանք կարող են լինել աշխատանքային պաշտպանության պաշտպանիչ սարքեր, պատշաճ հագուստ, անկման դեմ զսպող համակարգեր, ինչպես նաև միջոցներ, որոնք պաշտպանում են աչքերը, ականջները և շնչուղիները [2]:

Շատ կարևոր է նաև մշտապես գործող և պոտենցյալ վտանգավոր գոտիների բացահայտումը, դրանց սահմանազատումը և համապատասխան անվտանգության միջոցների կիրառումը: Համաձայն ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» ՀՀ շինարարական նորմերի 4-րդ՝ «Անվտանգության տեխնիկայի ընդհանուր պահանջներ»-ը գլխի 13-րդ կետի պահանջի՝ «Շինարարական կազմակերպության (անկախ սեփականության ձևից) ղեկավարները, աշխատողները ապահովվում են արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթը, պայմանները և դրանցում առկա անվտանգության ռիսկի աստիճանը: Աշխատողների մշտական կամ ժամանակավոր աշխատավայրերը պետք է գտնվեն վտանգավոր գոտիներից դուրս, եթե չկա վտանգավոր գոտիների տարածքում աշխատանքների կատարման անհրաժեշտություն: Մշտապես գործող արտադրական վտանգավոր գործոնների ազդեցության գոտիների սահմանագծերին պետք է տեղադրվեն պաշտպանիչ ցանկապատեր, իսկ պոտենցիալ վտանգավոր արտադրական գործոնների ազդեցության գոտիների սահմանագծերին՝ ազդանշանային ցանկապատեր և անվտանգության նշաններ» [2]:

Քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 749-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջների. «1. Կապալառուն շինարարություն և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս պարտավոր է կատարել շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության վերաբերյալ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները: Կապալառուն պատասխանատվություն է կրում նշված պահանջները չկատարելու համար» [5]:

Ինչ վերաբերում է բարձրության վրա կատարվող աշխատանքներին, ապա հարկ է նշել, որ ըստ ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» շինարարական նորմերի 3-րդ՝ «Հասկացություններ» գլխի 3-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջի՝ «Բարձրության վրա աշխատանք է համարվում 1,3 մետր և ավելի բարձրությունից աշխատողի վայր ընկնելու ռիսկի առկայությամբ կատարվող աշխատանքը»: Ըստ նշված նորմատիվ ակտի 4-րդ գլխի 83-րդ կետի պահանջի՝ «Բարձրության վրա աշխատելիս անհրաժեշտ է ապահովել պաշտպանիչ, անվտանգության և ազդանշանային ցանկապատերի առկայությունը և որոշել վտանգավոր տարածքների սահմանները», իսկ ըստ 97-րդ կետի պահանջի՝ «Առանց պաշտպանիչ ցանկապատերի բարձրության վրա կատարվող աշխատանքներն իրականացվում են զսպող անվտանգության համակարգերի և(կամ) ճոպանների հասանելիության համակարգերի տեղադրմամբ՝ համաձայն բարձրության վրա աշխատանքի թույլտվության»: Համաձայն 82-րդ կետի պահանջի՝ «Բարձրության վրա աշխատելու պայմաններից կախված՝ աշխատողները պետք է ապահովված լինեն ԱՊՄ-ներով՝ /անհատական պաշտպանության միջոցներով/, համատեղելի բարձրության անկման դեմ անվտանգության համակարգերի հետ» [2]:

3. Աշխատանքի ստուգումներ.

Կազմակերպություններն ու պետությունը պետք է իրականացնեն մշտական ստուգումներ՝ ապահովելու համար անվտանգության կանոնների պահպանությունը և վերլուծելով կարճաժամկետ ու երկարաժամկետ հետևանքները:

4. Անվտանգության մշտադիտարկում.

Աշխատանքի անվտանգության բոլոր համակարգերն ու գործիքները պետք է գտնվեն մշտադիտարկման տակ, որպեսզի, եթե բացահայտվել են խախտումներ, մշտապես իրականացվի հսկողություն և վերանայում:

Այսպիսով, աշխատանքի անվտանգության պահպանումը ցանկացած կազմակերպության և աշխատողի առաջնային խնդիրներից մեկն է: Անվտանգության ապահովման կանոնների խախտումները կարող են հանգեցնել ճակատագրական հետևանքների, այդ իսկ պատճառով էլ հարկ է, որպեսզի աշխատանքային միջավայրում իրականացվեն բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ նշված խախտումների կանխարգելման համար: Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ-ում գործող կազմակերպություններին առաջարկվում է իրեց աշխատողների համար ժամանակ առ ժամանակ կազմակերպել անհրաժեշտ դասընթացներ և վերապատրաստումներ՝ ապահովելով վերջիններիս անվտանգության տեխնիկական միջոցներով, ինչպես նաև՝ պարբերաբար իրականացնել աշխատանքային ստուգումներ և անվտանգության ապահովման մշտադիտարկումներ: Սույն հետազոտության շրջանակներում առաջարկվող կանխարգելիչ միջոցառումների իրականացումը կարող է զգալիորեն նվազեցնել անվտանգության ապահովման կանոնների խախտումները և բարձրացնել անվտանգությունը աշխատանքի պաշտպանության բոլոր մակարդակներում:

Գրականության ցանկ

1. Վիճակագրական տվյալներ (International Labour Organization), URL.https://www.ilo.org/publications/call-safer-and-healthier-working-environments.

2. ՀՀՇՆ 13-02-2022՝ «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» ՀՀ շինարարական նորմեր՝ (հաստատված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 26-ի թիվ 21-Ն հրամանով):
3. ԳՕՍՏ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցում. Ընդհանուր դրույթներ» (հաստատված «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի 2016 թվականի նոյեմբերի 08-ի N 71-Լ հրամանով):
4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 216-րդ, 217-րդ, 243-րդ, 255-րդ հոդվածներ:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 749-րդ հոդված:

ПРЕДЛОЖЕНИЯ ПО ЭФФЕКТИВНОМУ ПРЕДОТВРАЩЕНИЮ ИНЦИДЕНТОВ, ВОЗНИКАЮЩИХ В РЕЗУЛЬТАТЕ НАРУШЕНИЯ ПРАВИЛ ОХРАНЫ ТРУДА И ТЕХНИКИ БЕЗОПАСНОСТИ

Бадеян А. В., Варданян Л. А.

Статья посвящена актуальному и относительно новому на сегодняшний день виду судебно-экспертной деятельности, а именно, инженерно-технической экспертизе занимающейся анализом, оценкой и экспертными исследованиями различных инженерно-технических объектов. В частности, в данной статье предпринята попытка раскрыть нередко встречающиеся причины и последствия нарушений правил охраны труда и техники безопасности приводящие к административной, гражданско-правовой и уголовной ответственности. Обосновывается мысль о том, что на основании анализа выявленных факторов произошедших инцидентов в результате нарушений правил охраны труда и техники безопасности и соответствующих выводов по ним, могут быть в будущем предотвращены аналогичные инциденты или, по крайней мере, снижено количество неоднократно повторяющихся грубых нарушений, а именно, ситуаций, при которых действия(бездействия) работников могли стать причиной аварии, несчастного случая и т.п.. Выделяются и описываются характерные особенности предупреждения и профилактики опасности, а также рекомендации разработанные для поддержания безопасной работы. В статье обобщен материал по исследуемой теме, который позволяет систематизировать основные причины нарушений правил охраны труда и техники безопасности, а также их последствия. Рассмотрена официальная статистическая информация инцидентов произошедших в Республике Армения в результате подобных нарушений, а также обобщен международный практический опыт. На основании анализа и обобщения сведений в области судебных инженерно-технических исследований предложено реализовать ряд эффективных мер, направленных на сокращение числа происшествий и уменьшение ущерба, вызванного нарушением правил охраны труда и/или техники безопасности.

Ключевые слова: *охрана труда, правила безопасности, условия труда, безопасность труда, несчастные случаи, профилактика.*

EFFECTIVE PROPOSALS FOR PREVENTING INCIDENTS RESULTING FROM VIOLATION OF OCCUPATIONAL PROTECTION OR SAFETY RULES

Badeyan A. V., Vardanyan L. A.

The identification of the causes and consequences of violations of labor protection or safety rules is an integral part of engineering and technical expertise. Their analysis and relevant conclusions can serve as an incentive to avoid problems arising in the given field in the future or at least to reduce the number of constantly recurring similar cases.

The article presents the main causes of violations of labor protection and safety rules and their consequences. Reference is made to the Republic of Armenia and international statistics of cases resulting from these violations. It is proposed to implement a number of effective measures aimed at reducing the number of cases resulting from violations of labor protection or safety rules and reducing the damage caused.

Keywords: *labor protection, safety rules, working conditions, labor safety, accidents, prevention.*

Ներկայացվել է խմբագրության 18.02.2025
Ընդունվել է տպագրության 17.04.2025